ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2001 ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
E-mail: vanadzor.lori@mta.gov.am
info@vanadzor.am

Հեռ. 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

ՕԴ9 N. 318 « 4 » 02 2015թ.

Ձեր N. Ե/2015-23.01/54 առ « 23 » 01 2015թ.
Ձեր N. Ե/2015-29.01/80 առ « 29 » 01 2015թ.

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր գրությունների՝ տեղեկացնում եմ, որ 26.01.2015 կայացել է համայնքի ավագանու նիստ, ուր ինքներդ ներկա լինելով, կարողացել եք Ձեր տեսակետը ներկայացնել:

Նիստի օրակարգի հարցի քննարկումից առաջ ես առաջարկել եմ մեկ րոպե լռությամբ հարգել Գյումրիում ոճրագործությանը զոհ դարձած Ավետիսյանների ընտանիքի անդամների հիշատակը և ավագանու ներկա անդամների հետ միասին դատապարտել ենք հանցագործությունը և վստահություն հայտնել, որ իրավապահ մարմինները կանեն հնարավորը, հանցագործության առնչվող բոլոր հանգամանքները պարզելու և հանցագործին արժանի պատժի ներկայացնելու համար:

Նպատակահարմար չեմ գտնում հրավիրել ավագանու արտահերթ նիստ ՀՀ դատախազ Գևորգ Կոստանյանին ուղղված ուղերձ ներառող նախագծային առաջարկով:

Տեղեկացնում եմ նաև, որ Ձեր գրությունների էլեկտրոնային պատճեններն ուղարկվել են ավագանու անդամներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատ.՝ Է.Հովսեփյան
Հեռ.՝ 4-62-16